

Մեր առօրեայ յարաբերութիւններուն ընթացքին կը գործածենք բառեր ընհանրապէս, առ անց կանգ առնելու անոնց առթած մտապատկերներուն առջեւ եւ առանց խորհրդածելու անոնց պարունակութեան մասին: Սակայն, երբ յապաշինք անոնց իմաստներուն բազմազանութեան առջեւ, երեսութեան պարզութիւնը կը բարդանայ եւ կը կնճռոտի: Նոյն բառերը, միաժամանակ, կրնան տարբեր ձեւերով մեկնաբանուիլ, տարբեր անձերու կողմէ: Ինչպէս նաեւ, ժամանակի ընթացքին, կը զգենուն իմաստներու նոր խաւեր, ու ծաւալներ, արտայայտելով՝ հաւաքականութեան մը կենսունակութիւնը: Երբեմն, կարգ մը բառեր, մեկուսանալով այլ գիրերու շարայարումներէն, կերպարանափոխուելով, կը յամենան մեր մտածողութեան մէջ, նոր կենդանութիւն կը ստանան, ու կը վերածուին նախադասութիւններու, խոկումներու, մտատանջութեան եւ վիճելի տեսակէտներու:

## **ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

Երկու գործածական բառեր, որոնք կը կարօտին մանրագնին քննարկումի, մանաւանդ երբ մեր ազգային կեանքի վեջին տասնամեակի եղելութիւնները նկատենք մեր պատմութեան շատ կարեւոր հանգրուաններէն մէկը: Տարիներու ընթացքին փորձարկուած, ընթացիկ դարձած նպատակներ եւ իրագործումի միջոցներ պէտք է վերաքննուին պատասխանատու մարմիններու կողմէ, տեսլական մտասելերումներ, գոնձնական կարելիութիւններու սահմանին մէջ պէտք է յստակացնեն մեր ազգային էութեան վախճանականութիւնը եւ համադրական, ամբողջական, ազգային գաղափարախօսութիւն մը ըլլայ մեր բոլոր քաղաքական, մշակութային եւ կրօնական հարցադրումներուն սկզբնակէտը եւ վերջին դատաւորը:

Նախ խորհրդածենք «Հայեցի» բառին մասին, նկատի ունենալով միայն Հայկական Սփիւռքի յարափոփոխ պայմանները:

Մեր կրթական հաստատութիւններէն շրջանաւարտ եղած են հազարաւոր պատանիներ հայեցի դաստիարակութեամբ թրծուած : Հաւատաւոր ուսուցիչներ մեծ նուիրումով դաստիարակած են Հայութեան տեսականութեան հաւատացող եւ մանաւանդ՝ սատարող Հայեր: Ի՞նչ ոյժ կը ներկայացնեն անոնք, ու՞ր կը գտնուին: Ոպէս Հայ ինչո՞ւ, մինչեւ ե՞րբ: Ո՞վ է Սփիւռքի տիպար Հայը: Ի՞նչ չափանիշներով: Ապագայի սերունդներէն արդէօք քանիներ տակաւին պիտի յիշեն իրենց ազգային պատկանելիութեան արմատները: Ինչո՞ւ: Ինչպէ՞ս կարելի է զանոնք զօրակոչի ենթարկել որպէսզի մաս կազմեն մեր հասարակական կեանքին, իրենց բարոյական ու նիւթական ներդրումներով, գոհունակութեամբ եւ գոյութենական պատճառարկումներով: Որո՞նք են յաջողութեան նախապայմանները այդպիսի ծրագիրի մը:

Այժմ, Սփիւռքահայութիւնը կարելի է բաժնել երկու հատուածներու, անշուշտ բազմաթիւ ստորաբաժանումներով.

Ա. Հաւատաւոր եւ գործօն անհատներ, որոնք որպէս ազգային գործիչներ, դաստիարակներ եւ պարզ անձեր կ'ապրին որպէս Հայ, համբերութեամբ կը փորձեն մեր ազգային արժէքներուն ջահը փոխանձել կրաւորական հատուածին:

Բ. Կրաւորական մեծամասնութիւնը, առաջնայերթութիւնը տալով իր մարդկային մտահոգութիւններուն, իր ազգային արժէքներուն մաշումը կ'ընդունի լռելեայն, երբեմն ցաւելով ու յաճախ անտարբերութեամբ:

Ներկայի մտածողութեամբ, առաջին հատուածը պարզապէս կը տքնի երկարաձգելու երկրորդ հատուածին հաւաքական ինքնութեան հոգեւարը եւ, երբեմն, դժբախտաբար վարակուելով անձագրային համաճարակէն լուռ վկան ըլլալու իրենց զաւակներուն անդամակցութեան, կրաւորական հիւծող հատուածին:

«Հայեցի» բառը պէտք է ընդգրկէ պատմութեան ոգին, ներկային գործնական ներդրումը, եւ ապագային հաւատաւոր տեսիլքը:

Պատմութեան ոգին սոսկ մեր անցեալի քաղաքական դէմքերու եւ մարտական յաղթանակներու ու պարտութիւններուն ժամանակագրութիւնը չէ. այլ՝ մեր հաւաքական հպարտութիւններուն բիրեղացած արտացոլացումը. մեր արեւանգուած Արարատը իր տապանով, մեր հեթանոս արմատ բառերը, մեր առասպելները, մեր դիւցազներգութիւնը, մեր հնամեայ ու ժամանակակից ծուռ աշուղները, մեր կոթողներն ու տաճարները, մեր գորգերն ու մեր համբերութեան մետաղեայ մնացորդացը. ապա՝ մեր եկեղեցին իր հերոսապատումով, իր ճարտարապետութեան համաշխարհային վկայութեամբ, իր վաղնջական արարողութիւններուն առինքնող երգեցողութեան հեծիւնով, իր ձեռագիր մատենաներուն անհաւատալի թիւին վերապրումով, իր խաչքարերուն յաւիտենականութեան ձգտումով եւ մանաւանդ՝ իր սարերուն կառչած Արցախի գեղջուկին երկու հարիւրերորդ սերունդին հերոսական պայքարով:

Ներկայի գործնական ներդրումը ունի երկու ճիւղ. Հայրենիք եւ Սփիւռք:

Հայրենիքի հողին տէրն ու բնակիչը ինք կ'որոշէ այդ հողը պաշտպանելու յարմարագոյն եղանակն ու ժամանակը: Տնտեսական դժուարութիւններու լուծումը պայմանաւորուած է հաւաքական եւ անհատական մակարդակներու վրայ սկսուած տքնաջան աշխատանքի հետեւոկանութեամբ, առօրեայ զրկանքները ընդունելով որպէս փրկագին ապագայի բարօրութեան:

Յետ 1991-ի Հայը, իր երրորդ սերունդով հասած է վտանգաւոր հանգրուանի մը: Մենք, որպէս ամբողջական քաղաքացիներ մեր ապրած երկիրներուն, բնականաբար ազդուելով

մեր շրջապատի դրական ու ժխտական բազմադրիւր ազդակներէն, պաշտօնական եւ ընկերային կաշկանդումներէն, ողողուելով մոր սովորութիւններով, Հայութիւնը տակաւին կրնանք նկատել, Ազնաւորի գեղեցիկ մէկ խօսքով, մեր կրօնը: Սակայն՝ առանց ազգային հաւատամքի:

Ներկայի քառասկան ուժականութեամբ, Սփիւռքի տարեկան կորուստը հաւանաբար մոյմքան ահաւոր է քան Դեկտեմբերեան աղետին զոհերուն թիւը: Հոգիներու փլուզումը կը կարօտի մոյմքան նախատեսութեան, որքան բնութեան պոռթկումին պատճառած արհաւիրքը:

«Դաստիարակութիւնը» ունի երեք հանգրուան. տեղեկութիւն, գիտելիք եւ իմաստութիւն: Տեղեկութիւնները մաղուելով կը վերածուին գիտելիքներու: Վա՛յ այն ժողովուրդին որ իր գիտելիքները չի կրնար վերածել կազմակերպուած, խտացած իմաստութեան:

Իմաստութեան սկիզբը «Ծանիր Ձգեգ»ն է: Սակայն բաւարար չէ միայն մատնանշել մեր տկարութիւնները. այլ, հարկ է փնտռել անոնց ծնունդ տուող Պատճառները եւ իրապաշտօրէն փորձել շրջանցել, տարհանելով բոլոր ժխտական տարրերը եւ արժեւորելով դրական երեւոյթները:

Մեր ազգային ներքին տկարութիւնները կարելի է ամփոփել հետեւեան երկու համանիշ բառերով. այլամերժութիւն եւ հատուածամոլութիւն. Լիբանանցի Հայ, Հնչակեան Հայ, Անթիլիասական Հայք երեւանցի Հայ: Այս բոլորին հասարակ յայտարարը ՀԱՅՆ է: Պայման է դուրս ելլել մեր բազմատեսակ աշխարհագրական, գաղափարախօսական եւ յարանուանական պատեաններէն, ընդունելով Հայութեան գերակայութիւնը բոլոր այլ մասնակի պատկանելիութիւններու վրայ, եւ գործնականապէս սատարել ազգային միութեան ոգիին:

Այլամերժութեան յանկերզը, «ան որ մեզմէ չէ, մեր թշնամին է» կը ջլատէ հոգիները, եւ ազգը անդունդ տանող ամէնէն կարճ ճանապարհին է: Ոչ մէկ գաղափարախօսութիւն, կազմակերպութիւն կամ անհատ կրնայ խոռխտալ թէ ճշմարտութեան միակ տէրն ինքն է: Գործակցութիւնը փոխադարձ հասկացողութենէն փխող յարգանքի եւ սիրոյ վրայ կը հիմնուի: Ընդունելով ուրիշին արժանիքները, մենք չենք նուաստանար: Մեր հաւաքական կեանքին մէջ պէտք է հասնինք մոր իրադրութեան մը, ուր մէկ առաւել մէկ, պէտք է ընէ երկուքէն աւելի, Կշթալթեան տեսաբանութեամբ:

Ապագայի հաւատաւոր տեսիլքը կը պահանջէ վերատեսութեան ենթարկել մեր մտածողութիւնը, զգացական մտապատկերները, բնագոյական վախերը, եւ առարկայական մօտեցումով քննարկելէ ետք մեր ներկան, քաջութիւնը ունենալ առաջարկելու ապագայի տարբեր նպատակակէտեր եւ զանոնք իրագործելու յարմարաւետ գործընթացք:

Սփիւռքը ժամանակաւոր կայա՞ն մըն է թէ վերջնական լուծում: Եթէ կայան մըն է, պէտք է հարց տալ, դէպի ո՞ր: Եթէ վերջնական լուծում մըն է, պէտք է խորհրդածել անոր յարափոփոխ դերին մասին, փորձելով զայն վերածել յստակ նպատակներ ու արդիւնաբեր գործունէութիւն ունեցող հաւաքականութիւններու:

Մեր բոլոր գաղութները կը կարօտին նիւթական հսկայական ներդրումներու: Որո՞նց համար: Եթէ Հայկական վարժարաները պիտի մնան նպատակ եւ ոչ միջոց սահմանելի իտեալներու իրագործումին, նախընտրելի է կրճատել ժամանակը եւ ընդունիլ մեր նահանջը:

Բարեբախտաբար կայ նոր Հայաստանը, իր անկախութեան ներկայի բարդութիւններով, նաեւ ապաայի յուսադրիչ ակնկալութիւններով: Հայրենիքի եւ Սփիւռքի փոխ-յարաբերութիւնները պէտք է ըլլան լայնածաւալ, պետական մակարդակով, հիմնուած երկարաշունջ յստակ ծրագիրներու վրայ, օգտագործելով երկու կողմերուն բոլոր կարելիութիւնները, տոգորուած համահայկական միակ գաղափարախօսութեամբ մը, որուն սահմանումը կարելի է եւ պէտք է կատարուի:

Երբ ազգային գաղափարախօսութիւնը կը վերածուի հաւատամքի, այդ ժամանակ միայն կարելի է յստակացնել Հայրենիքի եւ Սփիւռքի Էական դերերը, զիրար ամբողջացնելու միտումով, առանց կրկնութիւններու մսխումին: Հետեւաբար, կարելի կ'ըլլայ նաեւ Սփիւռքի կրաւորական հատուածին առաջարկել այլ լուծումներ, միաձուլելով մեր մարդկային եւ ազգային երագներն ու վախերը եւ, հետեւաբար «Սփիւռքի մէջ ինչու պէտք է Հայութիւնը գոյատեւէ» հարցումը կ'ունենայ գործնական եւ մանաւանդ հաւաստի պատասխաններ:

Հայկական Սփիւռքը հասած է իր գագաթնակէտին: Առաջին սերունդին գաղթակահին հոգեբանութենէն ձերբազատուած, երկրորդ սերունդին նիւթական դժուարութիւններին յաղթապարումով, այսօր, երրորդ սերունդը իր մարդկային պէտքերուն եւ յաճախ տենչերուն բարարարումին կողքին տակաւին տոգորուած է ազգային զգացումներով, առաւել կամ նուազ չափերով: Հաւանաբար, ազգային առումով, յաջորդ սերունդը ըլլայ արագընդաց

ուծացումի սերունդը եթէ, մինչ այդ, Հայրենիքի եւ Սփիւռքի ղեկավարութիւնը նոր ուժականութեամբ զօրաշարժի չ'ենթարկուին եւ հահայկական հաւատամքով չգործակցին, օգտագործելու համար Հայրենիքի եւ անխտիր բոլոր Հայկական գաղութներուն հաւաքական եւ անհատական կարողութիւնները:

Այս ուղղութեամբ մեր կրթական հաստատութիւնները պէտք է ստանձնեն բնականապէս իրենց վերապահուած դերը: Այսինքն՝ ազգային գաղափարախօսութեան ծիրին մէջ դաստիարակել անհատներ, որոնք ունենան ազգային հաւատամք եւ այդ հաւատամքը արդիւնաւորելու կամք եւ գործնական միջոցներ, մարդկային բնական տենջերուն անզեղջ բաւարարութեամբ եւ պատկանելիութեան մը ապահոված յաւելեալ գոհունակութեամբ:

Կրթական հաստատութիւն մը կ'արդիւնաւորուի իր ծրագրին նպատակաշարմարութեամբ, դաստիարակներու հաւատացեալ զոհաբերութեամբ, ուսանողներուն գերազանցելու մղումով եւ նիւթական պայմաններուն յարմարաւետութեամբ:

Ծրագրի նպատակաշարմարութիւնը ընդհանրապէս կ'ընդգրկէ հաւաքականութեան մը արժէքները պահպանող, հարստացնող Եւ տարածող մտաւորական եւ գործնական միջոցները: Ամէն մէկ երկիր ունի իր իւրայատուկ կրթական ծրագիրը որ քաղաքական, տնտեսական եւ մշակութային ազդեցութիւններով կ'ենթարկուի յեղաշրջումի: Սփիւռքի մեր իրականութեան պարագային, կրթական հաստատութիւնները ունին կրկնակի առաքելութիւն՝ պատրաստելու մարդը եւ Հայը՝ միաժամանակ: Անշուշտ՝ սահմանելէ ետք յարմարագոյն մարդուն եւ Հայուն տիպարը:

Դաստիարակներուն հաւատացեալ զոհաբերութիւնը կարելի է ակընկալել, եթէ հաւատքի աղբիւրը վստահելի է եւ արդիւնքը պտղաբեր: Նաեւ, զոհաբերութիւնը ունի փոխադարձ պահանջքներ. բարոյական եւ նիւթական արժանավայել գնահատանք:

Ուսանողներուն գերազանցելու մղումը մարդկային բնութեան կենսունակութիւնը փաստող Երեւոյթներէն մէկն է: Գերազանցել, հասնելու համար լաւին, առանց ոտնակախելու ուրիշներուն իրաւունքը: Պայքարիլ, բարելաւելու «ես»ը ընդայնելով անոր հասկացողութիւնը, ընդգրկելու՝ մեր հաւաքական ինքնութեան պատկանող բոլոր անհատները՝ վաստկիլ «միւս»ին անկաշառ բարեկամութիւնը, առանց պատեհապաշտական նկատառումներու, անկեղծօրէն, շարունակաբար: Գերազանցել՝ առանց սնափառութեան:

Նիւթական պայմաններուն յարմարաւետութիւնը, իր լայն առումով, կը բովանդակէ.

Ա. Ճարտարապետական կառույցը, իր ս թնուղորտով, սարքաւորումներով, գրադարանով, աշխատանոցներով, խաղավայրով: Նախընտրելի է նուզեցնել մեր վարժարաններուն թիւը, բարձրացնելու համար անոնց որակը:

Բ. Դասագիրքերը, իրենց այժմէականութեամբ, պարունակութեան՝ նպատակայարմար ոգիով, եւ ձեւին՝ յստակու թեամբ: Պայման է հիմնականապէս փոխել ազգային պատմութեան արժէտորումի ներկայ հասկացողութիւնը, մեր մշակոյթի բազմազան ճիւղերու արգասիքը նկատելով մեր ազգային հպարտութիւններուն ամէնէն էական աղբիւրը, եւ ըստ այնմ, անյապաղ պտրաստել Հայերէն լեզուի եւ մեր ազգային մշակոյթի պատմութեան ամբողջական շարքեր:

Գ. Վարչական կազմակերպութիւնը, իր կրթական ծրագիրներու յստակ մշակումով եւ անոնց հետեւողական ու հաւատարմ գործադրումով:

Մինչեւ 1991 Հանցի դաստիարակութեան կորիզը կը կազմէր «Մեծ Երագ»ը եւ, բուսական գոյութեան մը անշարժութեամբ, կը փորձէինք պահպանել անցեալի մեր արժէքները, «ներկայ» ըսելու յարմար ժամանակին: Այդ յարմար ժամանակը արդէն սկսած է վերածուիլ անցեալի: Սովետ Միութեան աներեւակայելի փլուզումէն ետք, Հայաստանը այժմ կը պատկանի Միացեալ Ազգերու հոյիին, եւ որպէս պատասխանատու ինքնութիւն կը պատրաստուի երկրորդ հազարամեակը ապրիլ որպէս շարունակութիւն նախկին հազարամեակներուն: Հետեւաբար, մեր ծրագիրները պէտք է յեղաշրջուին նոր իրադրութեան յարմարելու համար, եւ մանաւանդ՝ սատարելու Հայրենիք-Սփիւռք փոխ-յարաբերութեան ուժականութեան:

Հաւատքը կը սնանի գործնական, անմիջական արդիւնքներով: Մեծ երագները կ'իրագործուին ամէնօրեայ աշխատանքներով եւ անոնց ըներացող գոհունակութիւններուն անհամար երանգներով:

Այժ՝ մենք պէտք ունինք հարիւր քառասուն լեզուներով նոր թարգմանիչներու, միջազգային քաղաքական գործիչներու, տեսալսողական բոլոր մարզերու լրագրողներու, կամատր պատասխանատու նամակագիրներու, քաղաքական ճնշումի խմբակներու, միջազգային ճանաչում ունեցող արուեստագէտներու, գիտնականներու եւ դրամատէրերու, Հայկական դրամատուներու եւ համաշխարհային դրամատուներու մէջ աշխատող ընդհանուր տնօրէններու, օտար լեզուներով արտայայտուող Սարոյեաններու եւ մեր դարաւոր մշակոյթի ամէնօրեայ աւետարանիչներու:

Միութիւնը գորութեան կը վերածուի ե թէ ազգը կազմող անհատները, կեդրոնաձիգ մտասէտերումներով, անձնապէս բարձրամալէ ետք, կ'աշխատին բարձրացնել ուրիշները, եւ

կը հաւատան Հայրենիքի բարոյական վարկի եւ նիւթական հզօրութեան երկարաշունջ եւ հետեւողական աշխատանքի պահանջին: Հայրենիքի փառքը, անպայման կ'ունենայ իր բարենպաստ արդիւնքը, կասեցնելու նահանջը: Անհատները աւելի կը զօրանան իրենց Հայրենիքի յարաբերական գերազանցութեամբ:

Հայեցի դաստիարակութիւնը կը յաջողի իր առաքելութեան մէջ, երբ ազգային զարթօնքէ մը ետք, Միւիտքը կը վերածուի կազմակերպուած կոտ ուժի եւ Հայութեան յաւերժութեան սատարող, Հայ կամ օտար անձերու թիւը յաւետ կ'աւելնայ:

***ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ Լ. ՊՈՒԼՏՈՒՔԵԱՆ***

*20.05.93*

***Ներկայացուած՝ ՀԲԸՄ-ի Կրթական Ցանձնախումբի կազմակերպած առաջին կրթական սեմինարին, Մայիս 1993-ին:***